ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սիրելի՛ հարազատներ,

Ուրախ ենք յայտնելու, որ ձեր մասնակցութեան եւ գործակցութեան շնորհիւ, ունեցանք շատ յաջող տօնավաճառ մը։

Մեր յաջորդ կարեւորագոյն ձեռնարկը եկեղեցւոյս 62-րդ տարեդարձի տօնակատարութիւնն է, որ տեղի պիտի ունենայ կիրակի, 8 Նոյեմբեր 2026-ին, Marriott Downtown *(7707* Woodmont Ave, Bethesda, MD*) պանդոկին մէջ ժամը 2։00-էն սկսեալ։ Իսկ առաւօտեան ժամը 10։30-ին, Ս. եւ անմահ պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ Գերաշնորհ Տէր Անուշաւան Սրբազան Արքեպիսկոպոս Դանիէլեան։ Կը հրաւիրենք ձեզ բոլորդ՝ մասնակցելու եպիսկոպոսական պատարագի հոգեպարար արարողութեան եւ եկեղեցւոյ տարեդարձի տօնախմբութեան։*

Անհամբեր ենք ձեր ներկայութիւնը վայելելու։ Շնորհակալութիւն նաեւ ձեր վստահութեան ու շարունակական աջակցութեան համար։

Տէր Հայր եւ Հոգաբարձութիւն

Dear Parishioners,

We were very excited and encouraged to have seen you all at our very successful bazaar which took place this past month.

Our next major upcoming event is the celebration of our church's 62nd Anniversary on November 8, 2026. Our celebration will start with our church service in the morning at 10:30am. His Eminence Archbishop Anoushavan Tanielian, Prelate, will celebrate the divine liturgy and deliver the sermon. After the church service, our Anniversary banquet will take place starting at 2:00pm - Marriott Downtown *(7707* Woodmont Ave, Bethesda, MD*)*

We encourage all community members to join Der Hayr and The Board of Trustees to attend the special Sunday service and celebrate our Anniversary.

Thank you for your continued support!



Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

SUNDAY, NOVEMBER 8, 2026



ՁԱՅՆ ԱԿ

ԽԱՉՎԵՐԱՑԷՆ ԵՏՔ Ը. ԿԻՐԱԿԻ

EIGHTH SUNDAY AFTER THE EXALTATION

ՀԱՄԱՍՏԵՂ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ
ՅԱՏՈՒԿ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ 9:30-ԻՆ
SPECIAL SERVICE FOR
HAMASDEGH ARMENIAN SCHOOL 9:30 a.m.

Ս. Պատարագ Առ. ժամը 10։30-ին հեռարձակում

Divine Liturgy **10:30** a.m. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

For All Sick  *Parishioners*

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(5 . 15 - 33)

Հետեւաբար ձեր ապրելակերպին ուշադրութիւն ըրէք: Մի՛ ապրիք անմտօրէն, այլ՝ իմաստուններու պէս: Օգտագործեցէ՛ք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են: Ուստի անմտութիւն մի՛ ընէք. հասկցէք թէ ի՛նչ կ'ուզէ Տէրը ձեզմէ: Գերին մի՛ դառնաք գինիին, որ անառակութեան կը տանի. այլ մասնաւորաբար Սուրբ Հոգիով լեցուեցէք, իրարու հետ սաղմոսներով, օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով խօսեցէք, եւ ձեր սիրտերուն մէջ միշտ երգեցէք ու սաղմոս ըսէք Տիրոջ, ամէն բանի համար միշտ շնորհակալութիւն յայտնելով Հօր Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով:

Քրիստոսի հանդէպ ձեր պատկառանքը արտայայտեցէք՝ իրարու հնազանդելով:

Կիներ՛, հնազանդեցէ՛ք ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէիք. որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս՝ ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին, իր մարմինին, որուն Փրկիչն է ինք: Հետեւաբար, ինչպէս եկեղեցին Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թող հնազանդին:

Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կիները այնպէս՝ ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր կեանքը տուաւ անոր համար, որպէսզի ջուրի լուացումով զայն մաքրէ եւ իր խօսքով սրբէ, այնպէս մը՝ որ եկեղեցին իրեն ներկայանայ ամբողջական փառքով, առանց ոեւէ արատի կամ խորշոմի կամ ուրիշ թերութեան, այլ՝ ըլլայ սուրբ եւ անարատ: Ճիշդ նոյն ձեւով, ամուսիններ պարտին իրենց կիները սիրել որպէս իրենց մարմինը. որովհետեւ իր կինը սիրողը իր սեփական մարմինը սիրած կ'ըլլայ, եւ չկայ մէկը որ իր մարմինը անտեսէ. ամէն մարդ ալ կը սնուցանէ եւ կը խնամէ իր մարմինը, ինչպէս Քրիստոս կը սնուցանէ եւ կը խնամէ եկեղեցին՝ իր մարմինը, որուն անդամներն ենք բոլորս, անոր մարմինէն ու ոսկորներէն: Սուրբ գիրքին մէջ գրուած է. «Ահա այս պատճառով այրը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Աստուծոյ ծրագրին կապուած կարեւոր ճշմարտութիւն մըն է ասիկա, որ ըստ իս՝ Քրիստոսի եւ եկեղեցիին կը վերաբերի: Բայց նոյնը կը վերաբերի նաեւ ձեզմէ իւրաքանչիւրին, որովհետեւ իւրաքանչիւր այր պէտք է իր կինը սիրէ իր անձին պէս, եւ ամէն կին պէտք է յարգէ իր ամուսինը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(8 . 49 - 57)

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ անոր ըսաւ,

- Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցներ վարդապետը:

Յիսուս ասիկա լսելով՝ ըսաւ ժողովրդապետին.

- Մի՛ վախնար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ոեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց.

- Մի՛ լաք. աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ:

Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ գիտէին որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, ապա բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ.- Աղջի՛կս, ոտքի՛ ել:

Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց որ ուտելիք տան աղջկան, մինչ ծնողները ապշահար եղած էին: Յիսուս անոնց պատուիրեց որ պատահածին մասին ոեւէ մէկուն բան չըսեն:



2026 FEASTS

November 7	Holy Archangels Gabriel & Michael
November 28	Saint Thaddeus and Saint Bartholomew
December 12	Saint Hagop (James) of Nisibis
December 24	Saints David the Prophet & Holy Apostle James
December 26	Saint Stephen the Protomartyr
December 28	Saints Peter and Saint Paul
December 29	The Holy Apostle James & John the Evangelist

🕮 SCRIPTURE READINGS 🕮

EPHESIANS (5:15-33)

Look carefully then how you walk, not as unwise men but as wise, making the most of the time, because the days are evil. Therefore do not be foolish, but understand what the will of the Lord is. And do not get drunk with wine, for that is debauchery; but be filled with the Spirit, addressing one another in psalms and hymns and spiritual songs, singing and making melody to the Lord with all your heart, always and for everything giving thanks in the name of our Lord Jesus Christ to God the Father.

Be subject to one another out of reverence for Christ. Wives, be subject to your husbands, as to the Lord. For the husband is the head of the wife as Christ is the head of the church and gave himself up for her, that he might sanctify her, having cleaned her by the washing of water with the word, that he might present the church to himself in splendor, without spot or wrinkle or any such thing, that she might be holy and without blemish. Even so husbands should love their wives as their own bodies. He who loves his wife loves himself. For no man ever hates his own flesh, but nourishes and cherishes it, as Christ does the church, because we are members of his body. “For this reason a man shall leave his father and mother and be joined to his wife, and the two shall become one.” This is a great mystery, and I mean in reference to Christ and the church; however, let each one of you love his wife as himself, and let the wife see that she respects her husband.

LUKE (8:49-57)

While Jesus was still speaking, someone came from the house of Jairus, the synagogue ruler. "Your daughter is dead," he said. "Don't bother the teacher any more."

Hearing this, Jesus said to Jairus, "Don't be afraid; just believe, and she will be healed."

When he arrived at the house of Jairus, he did not let anyone go in with him except Peter, John and James, and the child's father and mother. Meanwhile, all the people were wailing and mourning for her.

"Stop wailing," Jesus said. "She is not dead but asleep."

They laughed at him, knowing that she was dead. But he took her by the hand and said,

"My child, get up!"

Her spirit returned, and at once she stood up. Then Jesus told them to give her something to eat. Her parents were astonished, but he ordered them not to tell anyone what had happened.

ԵՕԹ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐ
SEVEN DEADLY SINS

1. Հպարտութիւն	**1.** Pride
2. Նախանձ	**2.** Envy
3. Բարկութիւն	**3.** Anger
4. Ծուլութիւն	**4.** Sloth
5. Ագահութիւն	**5.** Covetousness
6. Որկրամոլութիւն	**6.** Gluttony
7. Բղջախոհութիւն	**7.** Lust

ԵՕԹ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ
SEVEN VIRTUES

1. Խոնարհութիւն	**1.** Humility
2. Եղբայրասիրութիւն	**2.** Fraternal love
3. Հեզութիւն	**3.** Meekness
4. Աշխատասիրութիւն	**4.** Diligence
5. Ողորմասիրութիւն	**5.** Mercifulness
6. Ժուժկալութիւն	**6.** Abstinence
7. Ողջախոհութիւն	**7.** Chasteness

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Խոհեմութիւն	**1.** Prudence
2. Արիութիւն	**2.** Bravery
3. Արդարութիւն	**3.** Justice
4. Բարեխառնութիւն	**4.** Temperance

Բայց, այս բոլորին գլուխը **ՍԷՐ** – ն է
But, the head of all this is **LOVE**

2026 & 2027 Membership Dues - Parishioners who have not paid their 2026 Annual Membership dues are encouraged to remit payment. 2027 Membership Dues are also accepted now. The membership fees are $150.00 per adult and $50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.

✞ ✞ ✞ HOKEHANKISD ✞ ✞ ✞

ARCHPRIEST FATHER DICKRAN KHOYAN
ARCHPRIEST FATHER SEMPAD DER MEKHSIAN
ARCHPRIEST FATHER SAHAG VERTANESSIAN
ARCHPRIEST FATHER KEGHART BABOGHLIAN
DEACONS, CHOIR MEMBERS, BENEFACTORS, GODFATHERS, AND ALL DECEASED MEMBERS OF THE NATIONAL REPRESENTATIVE ASSEMBLY, BOARD OF TRUSTEES, LADIES GUILD, HAMASDEGH SCHOOL PRINCIPALS AND TEACHERS
Requested by: Der Hayr, Board of Trustees
Ladies Guild of Soorp Khatch

GOURGEN & MARGARET ASSATURIAN
AIDA MARKS
ROBERT & LIZA SHIPP
ROSIQUE AYVAZIAN
ELIZABETH KOCHARIAN
DR. DERTAD MANGUIKIAN
Requested by: Der Hayr and Board of Trustees
Ladies Guild of Soorp Khatch

LADIES GUILD DECEASED MEMBERS:
ANGELINE ABRAHAMIAN
HARRY ATANOSSIAN
ROSE BABOYAN
CAROLINE BESIRYAN
DIKRANOUHI CHAKARIAN
MARGARET DARDARIAN
MARGARET KRIKORIAN DARDARIAN
AZNIV DERZOOKIAN
VIRGINIA GARABEDIAN
JULIA HAMASIAN
ROSE HAMASIAN
MATILDA HARATUNIAN
KOHAR HAROUTUNIAN
SEDA KAVALDJIAN KACHIGIAN
VARTANOUSH KARIBIAN
JAMES KESHISHIAN
YN. SIRARPI KHOYAN

CONT'D →

✞ ✞ ✞ HOKEHANKISD ✞ ✞ ✞

SOSSIE KAVALDJIAN KOCHAKIAN
ARDEMIS KOCHARIAN
LOUSVART MANGASSARIAN
AROOSIAG MARDIROSSIAN
YN. HRIPSIMEH DER MEKHSIAN
DORIS MINASSIAN
AGHAVNI MIRANIAN
ALICE MUKITARIAN
OSKI ORNADZIAN
TAKOUHI PALIAN
ZABELLE PAUL
OPHELIA PETROSSIAN
AMY ROOMIAN
SERPOOHI SERENGULIAN
MARY SHAMIGIAN
SIRAN SINANIAN
KHONAR TAVITIAN
MARY TIKOYAN
PERNIGE TIKOYAN
ANNA TOMASKESIS
ANNA TOUTLIAN
FLORA VARTANIAN
YR. ARMENOUHI VERTANESSIAN
SEROUN WANG
ZAROUHI NAZARIAN
ALICE NAZARIAN
SETA GELENIAN
Requested by: Der Hayr and Board of Trustees
Ladies Guild of Soorp Khatch

CAROL BESIRYAN
KEVORK BESIRYAN
HAIGANUS BESIRYAN
Requested by: Der Hayr and Board of Trustees
Vrej Besiryan and Family
Ani Besiryan and Family
Arlette Besiryan

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Հրեշտակ կը նշանակէ պատգամաւոր, սուրհանդակ, նախակարապետ կամ երկնային դեսպան։ Աստուածաշունչը կը վկայէ, որ հրեշտակները ստեղծուած են առաջին օրը՝ լոյսին հետ միասին։

Ըլլալով անդրանցական տարածքի բնակիչներ, հրեշտակները զերծ են ժամանակի ներգործութենէն եւ չունին սեռական յատկանիշ։ Անոնք կը ներկայացնեն Աստուծոյ երկնային զօրքե-րը, որոնք ունին իրենց զօրագլուխ-ղեկավարները՝ Գաբրիէլ, Միքայէլ, Ռաֆայէլ, Անայէլ, Ուրիէլ, Ադոնիէլ, Փանուէլ, Բա-րաքիէլ, Երեմիէլ, Սաղաթիէլ եւ այլ առաջնորդ հրեշտակապետ-ներ։

Հին Կտակարանին մէջ, անոնք հանդէս կու գան որպէս Աստուծոյ ներկայացուցիչներ, միջնորդներ՝ հոգեւոր եւ նիւթա-կան աշխարհներու միջեւ. եւ այս հանգամանքը իր նորոգակ դրսեւորումը կը գտնէ Յիսուս Քրիստոսի անձին մէջ։ Իրրեւ այդպիսին անոնք ներկայ են արդէն Հին Կտակարանին մէջ՝ իրրեւ «Տիրոջ հրեշտակ» կամ «Աստուծոյ հրեշտակ» անունով։

Համաձայն Հայ Եկեղեցւոյ հրեշտակաբանութեան, Հրեշ-տակները «անմարմին գոյացութիւններ են, իմացական, անճ-նիչխան, մշտաչարժ, անմահ եւ սպասաւոր Աստուծոյ»։

Հրեշտակները, երկինքի մէջ անընդհատ կը փառաբանեն զԱստուած։ Սակայն անոնց մէկ մասը չարաչահելով իրեն վերա-պահուած ինքնիչխանութիւնը, ապստամբեցաւ Աստուծոյ դէմ եւ դարձաւ չար հրեշտակ կամ սատանայ, դեւ։ «... Աստուած մեղանչած հրեշտակներուն իսկ չխնայեց, այլ՝ զանոնք տար-տարոս նետել տուաւ, ուր խաւարին կապանքներով կապուած՝ կը պահուին մինչեւ դատաստանի օրը» (Բ Պետրոս 2.2-4)։

ANGELS

An angel appoints a deputy, messenger, forerunner, or heavenly ambassador. The Bible testifies that angels were created on the first day along with light.

Being inhabitants of the transcendental area, the angels are free from the influence of time and have no sexual characteristics. They represent God's heavenly armies, led by Gabriel, Michael, Raphael, Haniel, Uriel, Adonel, Remiel, Raguel, Jeremiah, Chamuel, and other leading archangels.

In the Old Testament, they act as God's representatives, mediators between the spiritual and material worlds. and this circumstance finds its new manifestation in the person of Jesus Christ. As such, they are already present in the Old Testament as the "angel of the Lord" or "the angel of God."

According to the archeology of the Armenian Church, Angels are "incorporeal beings, knowledgeable, sovereign, everlasting, immortal and serving God."

The angels in heaven constantly glorify God. However, some of them, abusing their reserved sovereignty, rebelled against God and became an evil angel or Satan, a demon. (Peter 2: 2-4).

Armenian Church Etiquette

ENTERING THE CHURCH

Your entrance into an Armenian Apostolic Church should be reverent and solemn. Always make the sign of the cross as you enter the Sanctuary. It is not appropriate to walk in the aisles when:

- The Gospel is being read
- The *Havadamk* (Nicene Creed) is in progress
- The Chalice Procession is occurring
- The priest is delivering the sermon
- The choir is singing *Soorp Soorp, Hayr Mer or Der Voghormia*
- Holy Communion is being distributed

Wait until the prayer or hymn is over and then proceed to take your place in a pew.

LIGHTING OF CANDLES

One of the devotional practices of the Armenian Apostolic Church is the beautiful custom of lighting candles in front of the Holy Icons. Make the sign of the cross, say a short prayer and take your place. Candles may be obtained from the table in the narthex/vestibule. It is customary to make a freewill donation when taking candles.

General Guidelines

It is important that we participate in the Divine Liturgy every Sunday, preferably from the beginning of the service, for the entire duration of the service, and receive Holy Communion.

While in church, it is not proper:

- To use cell phones or tablets
- To take pictures by disturbing the Services
- To cross legs while sitting
- To place your arms on the back of the pews
- For men and women to wear hats
- For ladies not to cover their heads
- To dress too revealing or too casual (No shorts, short skirts, tank tops, gym clothes, etc..)

We pray and hope that you adhere to these guidelines and be a role model for the generations to come in order to preserve our Armenian Church heritage and traditions.

Հայր մեր

Հայր մեր որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն Քո:
Եկեսցէ արքայութիւն Քո:
Եղիցին կամք Քո
որպէս յերկինս և յերկրի:
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:
և թող մեզ զպարտիս մեր,
որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց:
և մի տանիր զմեզ ի փորձութիւն:
այլ փրկեա զմեզ ի չարէն:
զի Քո է արքայութիւն և զորութիւն
և փառք յաւիտեանս.
Ամեն:

Our Father

Our Father, who art in heaven,
hallowed be Thy name.
Thy kingdom come.
Thy will be done,
on earth as it is in heaven.
Give us this day our daily bread;
Forgive us our trespasses,
as we forgive those who trespass against us;
and lead us not into temptation,
but deliver us from evil.
For the kingdom, the power,
and the glory forever
Amen